Խաչիկ Դաշտենց

Ռանչպարների Կանչը

28

ԲԵՐԴԸ

1918 թվականի մայիս ամիսն էր:

Սասունցի ձիավոր հայդուկների մի խումբ Իգդիրի սարերով սրընթաց իջավ Արարատյան դաշտ: Նրանց մեջ կային նաև մի քանի մշեցի հեծյալներ, որոնցից մեկը Ալադին Միսակն էր, իսկ մյուսը՝ իմ ձիապան Բարսեղը: Երկու շաբաթ առաջ Խնուս-Բերդից դուրս գալով, նրանք կտրել էին Ալաշկերտի հովիտը և Մարգարայի կամուրջով մոտեցել Մեծամոր լճին:

Մեր դիմաց Արագած լեռն էր, թիկունքին՝ Մասիսները, իսկ ետևից՝ Բարթողյան բարձունքներից ձյան հուսինի պես դեպի Սուրմալու իջնող բազմահազար գաղթականություն: Իջնում էին գրաստներով և առանց գրաստների, մեկն իր թաղիքն ու կարպետը մեջքին կապած և բահը ուսին, մյուսն իր խնոցին շալակած, երրորդը՝ իր երկանքն ու գերանդին, չորրորդը իր դհոլը գրկած՝ տխուր ու մտածկոտ:

Ձիավորներից ոմանք առաջարկեցին այդ գաղթականներին Էջմիածնի վրայով տանել Աշտարակ ու Ապարան, ոմանք էլ հարմար դատեցին Երևանի վրայով նրանց առաջնորդել դեպի Նոր–Բայազետ: Մեր աչքերը սակայն հառած էին Արագած լեռան քարքարոտ բարձունքներին, որի թավշյա ստորոտներն աննկատելի կայծում էին մեր նժույգների սըմբակների տակ:

Բարձր դարավանդի վրա կանգնած էր Թալինի հնադարյան բերդը: Այդ կրկնապարիսպ բերդի ներսում և նրա շրջակա ավաններում մեկ և կես դար առաջ հայ Կամսարական տոհմի շինականներին բռնությամբ տեղահանելով, ամրացել էին մի քանի թաթար և պարսիկ իշխանավորներ, կեղեքելով և սարսափի մեջ պահելով այդ շրջանի հայ աշխատավորներին:

Ամրոցի տերը մորուքավոր մի պարսիկ էր՝ Իբրահիմ խան անունով:

Այդ ամրոցը ոչ միայն իշխում էր Արագածի անցուղիներին, այլև մեծ վտանգ էր արևելյան Հայաստանի մայրաքաղաքի համար թշնամու հարձակման դեպքում:

Այդ բերդը մեր բաժինն է, ասաց Փեթարա Մանուկը և նրա ձին Մեծամորի երկայն եղեգները ճեղքելով կատաղորեն ծառս եղավ օդում՝ պատրաստ առաջ սլանալու:

Պիտի վերցնենք և պիտի ապրենք այդ սարի վրա, ավելացրեց Մորուք Կարոն, ձեռքը հաստատորեն իջեցնելով Չոլոյի ուսին:

Ծառս եղավ նաև Արծիվ Պետոյի ձին: Բոլոր հեծյալները գդակները հանելով թափ տվեցին դեպի Արագած լեռը:

Ուրիշ ոչ ոք, միայն այդ մի խումբ սասունցի հեծյալները պիտի գրոհի գնային բերդի վրա: Ահա թե ինչու մեր նժույգները Բարթողյան սարերից իջնելով կատաղի կանգնել էին Մեծամոր լճի եզերքին:

Վերջին անգամ մեր նժույգները երկայն եղեգները ճեղքելով, իրենց ռունգերը ագահորեն թաթախեցին Մեծամորի մթնած ջրերի մեջ:

Վճիռը այժմ Փեթարա Ախոյինն էր: Նա պիտի որոշեր վաղվա օրը: Եթե եղանակն աննպաստ լիներ, կարող էինք պարտվել չարաչար: Ու Պղնձյա Ախոն իր ձիով անջատվեց հեծյալների խմբից, որ բնության գաղտնիքը կարդար:

Ախոն գրեթե անսխալ մեկնաբանում էր ձիերի ականջների խաղը, գորտերի կոռոցը և ճպուռների տզզոցը: Գելհավքի երեվալը նշան էր գլխապտույտ անհաջողության: Եթե մայրամուտի պահին անծեղները դեպի անտառ թռչեին՝

անձրև էր սպասվում, երամ–երամ իրար սեղմվեին խժժալով՝ ահեղ փոթորիկ էր պայթելու: Ձիերի փռշտոցը հողմի նշան էր: Ուժգին որոտը կարկուտ էր բերում: Չկար բնության մի երևույթ, որ Փեթարա Ախոն չկարդար:

Անջատվելով խմբից նա ձիու գլուխը ուղղեց դեպի հարավակողմ և թամբից իջնելով զննեց իր ձիու ռունգերի ու ականջների խաղը: Ապա նայեց դեպի լեռները՝ որոշելու ամպերի շարժմունքը: Մի թեթև քամի անցավ լճի վրայով: Քամու հետ մի կուղբ երևաց ջրի մեջ և նրա մեջքի վրայով մի կաչաղակ թռավ, թևերը ուժգնորեն զարկելով իրար:

Տագնապեց Ախոն: Բայց շուտով մի ճպուռ երգեց եղեգների մեջ և մի գորտ կռռաց զարմանալի հանգիստ: Ականջը երկար պահեց նրանց ձայներին: Կռացավ և նորից լսեց: Տագնապն անցավ:

Հրաշալի եղանակ ունենք վաղվա համար, ազդարարեց հայդուկը և թռավ նժույգի թամբին:

Ես իմ հեծյալներին բաժանեցի երեք թևի. առաջին թևը հանձնեցի Փեթարա Մանուկին, երկրորդը՝ Մորուք Կարոյին, իսկ երրորդ թևը ես և Ախոն վերցրինք:

Վերին Թալինից դեպի հարավ–արևմուտք կա մի լեռ, որ կոչվում է Մեծ Արտենի: Հրաբխային լեռ է, չոր է, պղնձագույն: Մանուկը պետք է ամրոցը հարվածի այդ սարի կողմից, Մորուք Կարոն՝ Կարմրաշեն կայարանի, իսկ մենք՝ Աշնակ գյուղի:

Մայիսի հինգի աղոթարանը խոստանում էր հրաշալի օր, ինչպես նախատեսել էր Փեթարա Ախոն:

Մենք ձիերը հեծանք գիշերով:

Մինչև Կարմրաշենի երկաթուղային կայարանը միասին գնացինք:

Ճանապարհին կանգնած էր մի հաստլիկ տղամարդ կապույտ գլխարկով, ձեռքին կանաչ լապտեր և երկու դրոշակ՝ կարմիր և դեղին:

Կայարանապետն էր:

Տեսավ ներքևից սասունցի ձիավորներ են գալիս՝ զարմացած հարցրեց.

Ու՞ր կերթաք:

Բերդի վրա, պատասխանեց Փեթարա Մանուկը ձին կանգնեցնելով:

Խե՛ղճ մարդիկ, հառաչեց կայարանապետը ծոծրակը քորելով: Ապա դարձավ Մանուկին.

Ինչու՞ ես Էս խեղճ ձիավորներին տանում կոտորելու: Ու կարմրաշենցին բացատրեց, թե ինչպես Ալեքսանդրո-

պոլի կողմից հազար վեց հարյուր մարդ թնդանոթներով երկու անգամ փորձ են արել այդ բերդը գրավել, բայց չի հաջողվել:

Հիմա դու՞ք կուզեք տաս–քսան ձիավորով Թալինի բերդը վերցնել, արհամարհական հարեց կայարանապետը, մի ցավալի հայացք նետելով նրանց վրա:

Մեր շորերը պատառոտված տեսար, կարծեցիր, թե ողորմությա՞ն կերթանք: Ես մեր ամեն մի ձիավորին քո հազար վեց հարյուրի հետ չեմ փոխի, պարծանքով փոխադարձեց Փեթարա Մանուկը:

Գոնե մի քանի օր սպասեք, խորհուրդ տվեց կարմրաշենցին:

Էսօր որ չվերցնենք, Էգուց քո պապն էլ, իմ պապն էլ որ դան՝ չենք կարող վերցնել: Մենք ծովն անցել ենք, առու՞ն պիտի խեղդվենք, պատասխանեց փեթարացին ու ձին քշեց:

Աղոթարանը չբացված Մանուկն իր ձիավորներով կանգնած էր Արտենասարի գագաթին: Նրա խմբին միացել էին նաև մի քանի ձիավորներ գաղթականներից, որոնցից մեկը Սեմալցի Գալուստն էր:

Երբ արևը դիպավ Մասիսի ճակատին, Փեթարա Մանուկը, Սեմալցի Գալուստը և մյուս սասունցի հայդուկները բարձրագոչ ուռա գոռալով, ձիերը հեծած սարի

գագաթից խուժեցին դեպի ներքին Թալին: Ամենից բարձր գոռացողը Սեմալցի Գալուստն էր: Մենք էլ հարավից և Աշնակի սարահարթից մեր ձիերի գլուխները ուղղեցինք դեպի Բերդի պարիսպները:

Իբրահիմ խանը թաթար և պարսիկ պահակազորին և բնակիչներին ոտքի հանելով, սկսեց թնդանոթային ուժեղ դիմադրություն ցույց տալ ամրոցի խրամատներից: Սակայն ի՞նչ կարող էր դիմանալ հայրենիքը կորցրած լեռնականների ուժգին գրոհին: Մորուք Կարոյի և Փեթարա Ախոյի մարտիկները հողմային նժույգներով նետվեցին խրամատների մեջ, լռեցնելով Իբրահիմ խանի գնդացիրների որոտը: Երբ ես ամրոցի պարիսպներին հասա, Փեթարա Մանուկի հեծյալները արդեն խորտակել էին ամրոցի դռները և Բերդի մեծ դռնով խուժել ներս:

Թշնամին հյուսիսային դռնից փախուստի դիմեց: Ամրոցի տերը խուճապահար փախչում էր, իր ետևից քարշ տալով մի երիտասարդ թրքուհու: Այդ այն գեղեցկուհին էր, որ մի օր առաջ Կարսի նահանգապետը նվիրել էր իրեն:

Գնանք Յադիդամ, ասաց խանը և կռանալով երկու բազուկներով գրկեց աղջկան, իր հինայած ցանցառ մորուքը քսելով նրա բաց կրծքին:

Ով քաջդ էրմենի, ազատիր ինձ էս հրեշի ձեռքից, բղավեց թրքուհին դիմելով իր ետևից եկող հեծյալի օգնությանը:

Կանգնի՛ր, Իբրահիմ խան, քո դատաստանը իմ ձեռքին է, գոռաց Փեթարա Ախոն և իրեն վայր նետելով, մաուզերը քաշած չոքեց խանի վրա:

Աղջիկը ինձ, բերդը՝ քեզ, պաղատագին աղաղակեց Իբրահիմ խանը:

Եվ ամրոցն է մերը, և ամրոցի գեղեցկուհին, գրնգաց Պղնձյա Ախոն:

Վրա հասավ Չոլոն, և մինչ ամրոցի տերը և հայդուկ Ախոն զբաղված էին սրամարտությամբ, նա գերի թրքուհուն իր թամբին վերցնելով Բերդից դուրս տարավ:

Իմ հեծյալները Իբրահիմ խանի բոլոր բերդապահներին և դիմադրող բնակիչներին դուրս շպրտեցին ամրոցից, ոչնչացրին կամ գերի վերցրին: Մեկ-երկուսին Արծիվ Պետոն և Փեթարա Ախոն սվինահար արին: Ոմանք Բերդի բաղաններից իրենց նետում էին ցած, որ փախչեն և օդի մեջ զարկվում էին իմ ռազմիկների գնդակներից:

Կեսօրին ներքին Թալինի բերդը գրավված էր և հակառակորդի դիմադրությունը փշրված: Թշնամին մեծ կորուստ ունեցավ, իսկ մենք տվինք վեց սպանված և տասներեք վիրավոր:

Իբրահիմ խանը փախավ:

Վերջին դուրս եկողը բերդի տիրուհին էր, որ իր աղջկա հետ թաքնված էր ամրոցի նկուղներից մեկում: Գեղեցիկ էր խանի աղջիկը և նրա համար բերդի դռանը կռիվ եղավ. մեր զինվորներից երկուսը քիչ մնաց իրար սպանեին: Չոլոն սուրը քաշելով նետվեց երկուսի մեջտեղ.

Տղաները սպանվել են, իսկ դուք մի խանի աղջկա համա՞ր կկռվեք:

Ախոն, որ արյունը աչքն էր առել, մոլեգնած հարձակվեց Չոլոյի վրա: Դրությունը փրկելու համար ես կարգադրեցի Փեթարա Մանուկին, որ աղջկան շտապ հասցնի իր ծերունի հորը:

Մանուկը մեկնեց:

Ճիշտ այդ ժամանակ ես հրավեր ստացա Անդրանիկից, որով կոչ էր անում ինձ և տարոնցի բոլոր ուժերին Լոռի երթալ: Հրավեր բերողը Անդրեասն էր, մեր ֆիդայի կամավորը:

«Օսմանցին լցվավ Գյումրի» ասաց սուրհանդակ Անդրեասը, և խնդրեց, որ շտապ մեկնեմ: Տեղեկացրեց նաև, որ Ալեքսանդրոպոլի ճանապարհին բռնվել է մի թաթար սուրհանդակ, որը Երևանի քաղաքային դումայի որոշումները Թալինի վրայով հասցրել է թուրք բանակի հրամանատար Շեվքի փաշային:

Շտապ դեպի Լոռի, գոռաց Անդրեասը և թռավ ձիու մեջքին:

Ես իմ ձիապանին կարգադրեցի նրան ճանապարհ դնել և որոշեցի մեկնել, ինձ հետ վերցնելով տարոնցիների և խնուսցիների մի քանի հարյուրակ, ինչպես նաև Թալինի բերդը գրրաված հեծյալներից մի քանիսին:

Մեկնելու ժամանակ հայտնի դարձավ, որ իմ ձիապան Բարսեղը չկար: Ի՞նչ եղավ՝ չիմացա: Եվ ժամանակ էլ չկար նրանով զբաղվելու: Վստահ էի սակայն, որ եթե ողջ է, կերևա անշուշտ, իսկ եթե ողջ չէ, ուրեմն հերոսաբար զոհվել է մի որևէ հարկադրական կռվում:

ԴԵՊԻ ՎԱՅՈՑ ՁՈՐ

Ես իմ ձիավորներին առած միացա Զավախքից վերադարձած Անդրանիկի զորամասին և մենք Քարախաչի լեռնանցքով բարձրացանք դեպի Լոռի:

Առաջին գյուղը, որ մտանք՝ Վարանցովկան էր: Երկար գյուղ էր սա և բնակիչները երկար մորուքներով ու երկարաճիտ ոտնամաններով մալականներ: Գյուղի միջով անցնելիս նրանցից ոմանք իրենց ձեղուններից գաղտագողի կրակեցին մեզ վրա: Անդրանիկը ձիու գլուխը շուռ տալով՝ ասաց, «Էրկեն գեղ, թե մեկ էլ ետ դարձա դու իմ ձեռքից չես պրծնի»:

Վարանցովկայից եկանք Զալալօղլի: Մեր մուտքից առաջ Զալալօղլիում սուր վեճեր էին ծագել հայության տարբեր հոսանքների միջև: Անդրանիկը, դիմելով տեղի հայկական կայազորին և մեզ դիմավորելու եկած բազմությանը՝ ասաց. «Լսել եմ, որ երկու օր առաջ այստեղ ընդհարումներ են եղել մեծամասնականների, փոքրամասնականների և դաշնակների միջև: Նախ կռվենք մեր գոյությունը պաշտպանելու իբրև ազգություն»:

Զալալօղլիում շատ հայ որբեր կային: Մայիսի 23-ին մենք նրանց ձիերի թամբերին առած իջեցրինք Քոլագերան և հանձնեցինք կայարանապետին, որ ուղարկի Թիֆլիս, իսկ մենք բարձրացանք Դսեղ: Զինվորական բարձր կենտրոնից Անդրանիկին հրաման եկավ, որ իր զորքով մնա այդտեղ և պաշտպանի երկաթուղու գիծը: Մի քանի օրից հետո Դսեղից իջանք: Հազիվ էինք հասել Մարցի գեղատեսիլ անտառին, երբ սկսվեց կարկտախառն անձրև, որ տևեց մինչև ուշ գիշեր: Ամբոխներից դողում էին հաստաբուն կաղնիները և

փայլակը զայրույթից պատառոտում էր իր կուրծքը՝ նրանց խիտ սաղարթներից բեկվելով:

Մայիսի 29-ին մտանք Դիլիջան: Գաղթականները խռնվել էին Դիլիջանի ձորում: Այդտեղ լուր եկավ, թե Արաքսի ափին տեղի է ունեցել մեծ ճակատամարտ և հայ ժողովուրդը թեև հաղթել է այդ ճակատամարտում, բայց ազգային խորհուրդը մայիսի 28–ին Հայաստանը հռչակել է անկախ հանրապետություն՝ Բաթումում հաշտություն կնքելով ռոմի թուրքերի հետ և նրանց իրավունք տալով Դիլիջանի վրայով շարժվել դեպի Բաքու:

Թշնամին պահանջել էր զինաթափ անել և ցրել նաև Անդրանիկի զորամասը, իսկ նրան գերի բռնել և հանձնել իրենց, եթե փորձ անի մտնելու Հայաստանի սահմաններից ներս:

«Երեսուն տարի կռվել եմ, ինձ չեն բռնել, հիմի՞ կուզեն գերի բռնել», ասաց Անդրանիկը և մերժեց ճանաչել թուրքերի հետ կնքված դաշնագիրը: Նա հեռախոսով կապվեց Արարատյան հանրապետության նախագահ Արամի հետ. «Անդրանիկն է խոսողը: Դուք վճռել եք թշնամուն առանց կռվի թույլ տալ Դիլիջանի կիրճով անցնել դեպի Գանձակ և Բաքու: Ադիկա դավաճանություն է: Ալեքսանդրոպոլի կոմիտեի պահանջով դուք ինձ հեռացրիք սահմանից, ուղարկելով Զավախք և Լոռի: Սարդարապատը ապացուցեց, սակայն, որ մեր ժողովուրդը ըն՛դունակ է հրաշքներ գործելու: Թույլ տվեք ինձ փշրել թուրքական բանակը Դիլիջանի կիրճում»:

Մերժողական պատասխան ստանալով, Անդրանիկը հայ՛տարարեց, որ իր համար ընդունելի չէ Բաթումի հաշտությունը: «Այդ հաշտության պայմանագրով դարերի ստրկության շղթան դուք ձեր ձեռքով ձեր վիզը և ձեր ոտքերը անցուցիք», ասաց նա և իր չորս հազար զորքով ուղղվեց դեպի Պարսկաստան:

Հունիսի 5-ին նա ելավ Դիլիջանից և Սևանի ափերով անցավ Ելենովկա՝ արևի տակ չորացնելով իր զորքի հանդերձանքը: Անցանք Լճաշենը և ապա դարձյալ կայծակների ու ամպերի հզոր որոտմունքով, անձրևի ու հեղեղի միջով մտանք Նոր–Բայազետ:

«Թուրքերի ձեռքով ստեղծված Հայաստանում» զինաթափվելու և աստիճանաբար ասպարեզից վերացվելու վտանգ էր Ապառնում արևմտահայ գրեթե բոլոր զինյալ ուժերին և հին հայդուկներին: Ուստի Արարատյան հանրապետությունից դրժգոհ շատ հայ զինվորներ, որոնք հերոսաբար կռվել էին Սարդարապատի դաշտում և Բաշ–Ապարանում, փոքրիկ խմբերով եկան և միացան մեր զորամասին:

Առաջինը հայտնվեց Փեթարա Մանուկը, բերելով սասունցի շինականներից կազմված գունդը, որ կոչվում էր «Սասունցիների պոլկ»: Այդ գնդի մեջ էին Թալինի ամրոցը գրաված հայդուկ զինվորները: Նրանց հրամայված էր քաշվել դեպի Նոր–Բայազետ և Զանգեզուր՝ թուրք զինվորների գրգռությունից հեռու մնալու համար: Դիլիջանի կիրճից, Երևանի, Քանաքեռի և Եղվարդի բարձունքներից դեպի Նոր–Բայազետ էր շարժվում արևմտահայ գաղթականների քսանհինգ հազարանոց մի բազմություն:

Որտեղ Անդրանիկ, էնտեղ լե մենք, ասում էին ու կրնկակոխ հետևում մեր զորամասին:

«Սասունցիների գունդը» առանձին էր շարժվում: Այդ դրն՛գի կամավորներից մի քանիսի կանայք զինվորի շոր էին հագեի որ զորքից անբաժան լինեն: Զինվորի հագուստ և զենք էին կրում Մարթան՝ Մորուք Կարապետի կինը, Յադիգամը՝ Չոլոյի կինը, Աղջնա Վահանի կինը և շատ ուրիշներ: Գաղթականների մեջ էին Մոսե Իմոն իր կնոջ և աղջկա հետ, Մորուքի եղբայր Օհանը և Տալվորիկցի Ֆադեն՝ բահը ուսին և թաղիքն ու կարպետը մեջքին կապած: Սրանց առջևից գնում էին Հոնկա պապի թոռները, բոնաշենցի Ծաղիկ Համբարձումը և խնոցի ու գերանդի շալակած շատ գյուղացիներ, որ մի քանի շաբաթ առաք իջել էին Բարթողյան լեռներից: Դհոլ գըրկած շինականն էլ այնտեղ էր: Դրանց բոլորի մեծավորը Սոսե մայրիկն էր՝ ձին հեծած և մի պատանի զինվոր առջևից: Սոսեի սրտում համազգային վշտից բացի խլրտում էր մի անձնական ցավ: Նրա մեծ որդին կորած էր և նա երբեմն ձին կանգնեցնելով, դիմում էր երիտասարդ զինվորին՝ ասելով. «Ղարիբ, լաո, մի խաղ ասա Սոսե մայրիկի համար»:

Նոր–Բայազետ ում Անդրանիկը ապստամբության դրոշ պարզեց և վերսկսեց կռիվը ռոմի թուրքերի դեմ: Դիմեց Անդրանիկը իր զորքին և ասաց,

Աշխարհում դեռ չի եղել մի երկիր, որի ժողովուրդը տեղահան եղած շարժվի իր բանակի հետ: Ես այդ դժբախտ բանակի հրամանատարն եմ: Մինչև այսօր ինձ Կովկասի զորաց հրամանատար կանվանեին, բայց հիմա ես ինձ դարձյալ Սասունի մեջ կռվող հայդուկ կկոչեմ: Այնքան ատեն, քանի դեռ մեր դաշնակից պետությունները չեն հաղթված և իրենց սուրը վար չեն դրած, ես պիտի շարունակեմ կռիվը ուժերիս ներածին չափով, կամ պիտի մեռնեմ, և կամ, եթե ողջ մնամ, Հայաստանը ազատագրված պիտի տեսնեմ: Ես զինվոր եմ, ճընշվածների և ստրկացածների բանակի զինվոր: Որտեղ պայքար կա ազատության համար, կռիվ կա տիրողների դեմ այնտեղ է իմ սուրը: Այս պահիս ես որևէ օգնող չունեմ: Ուր որ գտա մի պատառ հաց՝ հոն կուտեմ, չգտա անոթի կմնամ: Ով ի սրտե կփափագի ընկերանալ ինձ՝ կարող է մնալ իմ զորամասի մեջ, պայմանով, որ եթե ինձ նման անոթի մնա, տրտունջ չհայտնի: Իսկ չուզողը հիմիկվանե կարող է մեկնել: Դիմեց Անդրանիկը իր ետևից եկող գաղթականությանը և ասաց. «Գիտեմ, որ իմ զորամասը շատ նեղությունների պիտի հանդիպի այս ճանապարհին և դուք արգելք պիտի ըլլաք մեր բոլոր շարժումներին, և թերևս, բոլորդ էլ ջարդվեք, բայց քանի որ վճռել եք ընկերանալ կրնաք գալ»:

Ու վեց լեռնային թնդանոթով, սայլերին ու ուղտերին բարձած ռազմամթերքով ու պարենով մեր զորամասը Սելիմի լեռնանցքով սկսեց իջնել դեպի Վայոց ձոր:

Ժայռերն այդտեղ թուխ էին, արծաթագույն ու կարմիր: Եվ այդ բազմագույն ժայռերի միջով Քարագլխի քար ու քարափից հեղեղի պես իջնում էր գաղթականությունը: Շալակել են ով ինչ կարող է:

Այդտեղ էր, որ գաղթականների մեջ երևաց կեռ եղջյուրներով մի գոմեշ ամեն տեսակ տնային իրերով բեռնված ճրագվառոցից մինչև հավքառ, ուրագից մինչև աստվածամոր պատկերը՝ երկար թարթիչներով: Խառնվել էր գաղթականների հոծ բազմությանը և արածելով բնազդորեն շարժվում էր առաջ: Այդ անսովոր բարձկանը գրավել էր ամենքի ուշադրությունը: Ոմանք նրա վրա խնամքով դարսված և ամուր կապված իրերից կռահում էին, որ այդ բարձկանը Խարբերդի կամ Բասենի կողմերից պետք է եկած լինի, ով էր տերը, ինչպես էր հասել մինչև Սելիմի լեռնանցքը՝ չիմացվեց և հարցնող էլ չկար:

Այդ բարձկանը այժմ ամենքինն էր և ոչ մեկինը: Վայոց ձորի կամ Դարալագյազի հովիտը, դեպի ուր մենք իջնում էինք, առիթ էր տվել զարմանալի զրույցների: Երկու գաղթական այդ հովիտը համեմատում էին Մշո դաշտի հետ և այդ կետից ակամա հեռանալով, վեճը կենտրոնացրել էին այն հարցի վրա, թե Բիթլիս քաղաքը քանի ժամ է հեռու ս. Կարապետի վան՛քից, արդյոք տասնչո՞րս, թե՞ տասնութ: Վերջում համաձայնեցին, թե հեռավորությունը՝ տասնութ ժամ է ոտքով: Իսկ մեկ ուրիշը իր գյուղն էր հիշում, ասելով, թե Առնջվանքը այնքան մոտիկ էր Մուշ քաղաքին, որ Առնջվանքում վառած ծխախոտը մինչև պրծներ՝ կհասնեիր Մուշ:

Մ երթ բառաչելով և մերթ արածելով նրանց կողքից շարժվում էր բարձկան գոմեշը: Մի խնոցի դղրդոցով գլորվեց ձորը: Ապա աստվածամոր կողքից մի ուրագ զնգաց քարափին հավի թառը ցնցելով:

Ծաղիկ Լամ բարձումը ետ նայեց.

Բան չկա, գաղթի ճամփա է, դրախտի ճամփա չէ: Ամեն բան լե կպատահի:

Իմ կողքից անբաժան են Շահկա Արոն, Ալադին Միսակը և Մշեցի Ճիրոն: Սմբուլ Արշակն էլ մեզ հետ է: Ձիերը հեծած լեռնիվար իջնում են Խնուսցի Փիլոսը, Պուճուր Աբրոն և գումակի պետ հին հայդուկ Լոլո Գևոն: Առջևից Անդրանիկն է գնում, ետևից՝ հեծելազորի հրամանատար Սարդիս Ճեպեճին և երրորդ գումարտակի զորապետ բժիշկ Բոնապարտը, մի տասնյակի չափ գարահիսարցի և բայբուրդցի քաջահաղթ հեծյալների հետ:

Եմբի մեջ է նաև հիսնապետ Թորգոմը: Հեռվում երևում են Սյունաց սարերը ամպերի մեջ կորած: Սոսե մայրիկը գաղթականների առաջ ընկած ձիով իջնում է զորքի ետևից: Ամեհի բարձկանը կանգնել է մի կարմիր ժայռի և անդունդի վրայով զարհուրելի բառաչում է դեպի հեռվում երևացող Ջիվանշիրի սպիտակ գագաթները:

Հայոց Մոզ քաղաքի ավերակների մոտով մեր ձիերը ընթացք վերցրին դեպի Մարտիրոս գյուղը սարի լանջին: Հետևյալը Խաչիկն էր: Այդ գյուղի բնակիչները մեզ ասացին, որ հաջորդ՝ Պողոսքիլիսա գյուղի բնակիչները մեզ երևի թույլ

չըտան իրենց գյուղի միջով անցնելու:

Անդրանիկը հասարակ շինելը քաշեց իր զինվորական զգեստի վրա և մի քանի գյուղացիների վերցնելով, գնաց այդ գյուղը՝ ճանապարհ պահանջելու:

Կանչեց գյուղապետին՝ ասաց.

Անդրանիկ փաշան ուզում է ձեր գյուղի միջով դեպի Նախիջևան անցնել: Նրան չդիմադրեք:

Իսկ ո՞ր է Անդրանիկ փաշան, հարցրեց ադրբեջանցի գյուղապետը:

Ա՛յ, էնտեղ է, իր զորքի հետ:

Մեզ վնաս չե՞ն տա:

Ձեր հավերին նույնիսկ քշա չեն ասի:

Զորքը իջավ կանգնեց այգիների մոտ, իսկ գաղթականությունը շարժվեց դեպի Նախիջևան: Վերջին անցնողը բարձկան գոմեշն էր: Հավի թառը կախ էր ընկել աստվածամոր կողքից և քիչ էր մնում վայր ընկնի: Անդրանիկը հավթառը բարձկանի վրայից վերցնելով՝ մեկնեց գյուղապետին:

Ձեր հավերը շատ են: Այս հավթառը իմ կողմից նվեր ձեզ:

Իսկ ձեզ պե՞տք չի:

Մենք տուն ունե՞նք, որ հավ ունենանք: Ուղղակի իբրև հիշատակ:

Բարձկանը շարժվեց և նրա ետևից շարժվեց զորքը, ինչպես ասված էր:

Բայց ո՞ր է Անդրանիկ փաշան, հարցրեց գյուղապետը, դիմելով հայ զինվորին:

Շայպինանդը շինելը վրայից մի կողմ քաշեց՝ ասաց.

Անդրանիկը ես եմ:

Հուզվեց ադրբեջանցի գյուղապետը Անդրանիկի այդ առա՛քինի վերաբերմունքից: Մեր ամբողջ զորամասը ետ կանչեց, մի ամբողջ օր պահեց իրենց գյուղում, կերակրեց, հյուրասիրեց ու դրեց ճանապարհ:

Հին հայդուկ Լոլո Հաջին ինչ–որ բան էր պատմում «մարալկանների» երկրի մասին, երբ մտանք Նախիջևան:

Անդրանիկը այդ քաղաքի ադրբեջանական թաղամասի բընակչությանը դիմելով՝ ասաց. «Սալամ, յոլդաշլար: Մենք հայերս հնուց ի վեր ջատագով ենք խաղաղ աշխատանքի: Թուրք աշխատավոր բնակչության հանդեպ ես ոչ մի ոխ չունեմ: Ես կռվում եմ միայն նրա բռնակալ սուլթանների, ապիկար բեկերի և աշխարհի անարդար կարգերի դեմ: Ես ճանաչում եմ միայն մի ազգություն դա բոլոր ճնշվածների ազգությունն է»:

ԶՈՒԼՖԱՅԻ ԿԱՄՈՒՐՋՆ ԱՆՑՆԵԼԸ

Հունիսի 20–ին հասանք Զուլֆա:

Այդտեղ լուր եկավ, որ Խալիլ փաշան հետապնդելով Վասպուրականից նահանջող հայ և ասորի գաղթականությանը, Զուլֆայի գծով զորք է փոխադրում Պարսկաստան՝ դաշնակիցների դեմ: Տեսնելով, որ Անդրանիկը ոչ միայն զենքը վայր չի դրել, այլև որոշել է շարունակել կռիվը հասնելով մինչև Զուլֆա, թուրք փաշան սպառնացել էր գրավել Երևանը, եթե Հայաստանի վարիչները անհապաղ զինաթափ չանեն նրան և չհանձնեն իրենց: Փաշային պատասխան էր տրվել, որ Անդրանիկը արտաքսված է Հայաստանի սահմանն երից իբրև խռովարար, որ նա ինքը ապստամբված է Հայաստանի հանրապետության դեմ, չի ճանաչում թուրք–հայ զինակցությունը և իրենց կարողությունից վեր է ձեռք գցել անհնազանդ զորավարին: «Եթե ցանկանում եք անպատճառ ձեռք գցել նրան, դուք մեզնից զորավոր եք, կարող եք երթալ և բռնել», ասված էր պատասխանի մեջ:

Զուլֆա հասնելով Շապինանդի առաջին գործը եղավ անցնել Արաքսի վրա շինված կամուրջը և Խոյի վրայով օգնության փութալ Վասպուրականի հետապնդվող գաղթականությանը:

Զորավարը հայկական Զուլֆա մտավ մեր սպայակույտի ձիավոր հարյուրակով, զորամասի գլխավոր ուժերից կես ժամ առաջ: Հարյուրակի առջևից ընթանում էր քաջարի հայդուկապետը: Նրանից մի քանի քայլ ետ՝ դրոշակակիրը, զորամասի դրոշակը բարձր պահած, ապա ես, մի քանի հարյուրապետներ, և նվագախումբը: Փողային գործիքների պակասի պատճառով նվագախումբը համալրված էր ջութակ և սրինգ նվագող զինվորներով: Հասարակ շվի փչող էլ կար: Մի քանի տարբեր ձևի գալարափող, շեփոր, ծնծղա, թմբուկ, ջութակ և սրինգ: Աշխարհում ոչ մի զորք այդպիսի զարմանալի նրվագախումբ չէր ունեցել:

Անդրանիկը հեռվից ուշի–ուշով դիտեց կամուրջը, ապա գլուխը շուռ տալով նայեց իր հեծյալներին: Հարյուրապետ Ճեպեճի Սարգսի շնորհալի դեմքը, բեղն ու փափախը և զինվորական տարազը վայելչորեն իրար ներդաշնակած հաղթանդամ փաշայի երևույթ էին տալիս նրան: Ճեպեճին հասկացավ զորավարի միտքը և ձին քշեց առաջ, գրավելով առաջապահ դիրք:

Կամուրջը հսկող թուրք պահակապետը հարցրեց, թե մենք ովքեր ենք և ուր ենք գնում: Շապինանդը արագացրեց ձիու վազքը և համարձակ մոտենալով պատասխանեց, թե ինքը այսինչ հայ զինվորականն է, արդեն հաշտություն է կնքված Հայաստանի վարիչների և թուրքերի միջև, և ինքը պաշտոն ունի թուրքական ճակատի գերագույն հրամանատարի և նորաստեղծ Արարատյան հանրապետության կառավարության կողմից գաղթականությանը Զուլֆայի գծով տանել իրենց երկիրը՝ Թուրքիա: Ավելացրեց նաև, որ ինքը սաստիկ զարմացած է, թե ինչպես մի այդպիսի կարևոր խնդրի մասին գերագույն հրամանատար Վեհիբ փաշան հեռագիր չի տվել Զուլֆայի հրամանատարին:

Տեսեք, փաշան զորքով գալիս է, ասաց նա հեռվից Ճեպեճի Սարգսին մատնացույց անելով, և հրաման տվեց նրվագել օսմանյան ռազմական քայլերգը «Շանլի վաթան Բինլեր յոլա»: Պահակապետը և իր ասկյարները զգաստանալով բարևի կեցան կամուրջի վրա և շտապեցին շարք կազմել նորեկ փաշային և նրա զորքին պատշաճորեն դիմավորելու:

Քանի մոտեցանք կամուրջին, այնքան մեր ընթացքը սաստկացավ հետզհետե վերածվելով խելահեղ վազքի: Մինչ թշնամին գլխի կընկներ, թե ինչ կատարվեց, Անդրանիկն իր ձիավորներով արդեն անցել էր կամուրջը և շրջապատել

պահակախմբին: Նա բոլորին զինաթափ արեց և ուղարկեց ռուսական Զուլֆա:

Այդտեղ զորք եկավ մեր դեմ: Հիսուն ռոմի ասկյար սպանվեց այգ կռվում, մնացյալները դիմեցին փախուստի: Փախչող ասկյարներից մեկի ձին վազեց դեպի մեր կողմը: Ասկյարը հրաման ստացավ ձին ետ դարձնելու: Վազեց ձիու ետևից: Անդրանիկի հրամանով բռնեցին ասկյարին և զինաթափելով բերեցին իր մոտ:

Տղաս, մի՞թե դու չգիտես, թե ովքեր են հետապնդում քեզ: Չվախեցա՞ր, որ կարող ես սպանվել: Ինչու՞ ես մի ձիու համար կյանքդ վտանգի ենթարկում:

Փաշան սաղ մնա, գոչեց ասկյարը, ես հայրենիքի և հրամանի գերի եմ: Համոզված եմ նաև, որ ձեզ պես քաշ հրամանատարը իմ կյանքը ինձ կբաշխի: Անդրանիկը հրա~ մայեց վերադարձնել թուրք զինվորի ձին և որպես նվեր մի ատրճանակ տվեց նրան.

Առ, որդիս, ասաց Անդրանիկը, սա էլ ինձնից հիշատակ քեզ: Նստիր քո ձին և հասիր զորամասիդ, դու արժանի ես ապրելու, աֆերիմ, զավակս:

Ասկյարը փութկոտությամբ հեծավ իր ձին և դարձավ զարմանքով.

Բաբա՛մ, Անդրանիկ փաշան դու՞ք եք:

Ինչպե՞ս իմացար:

Այդ հայրական ու հերոսական վարմունքը վայել է մենակ Անդրանիկ փաշային, որի մասին շատ էի լսել, բայց տեսած չկայի: Բախտավոր եմ, որ սեփական աչքով տեսա և հիմա մեր զինվորներին կպատմեմ, ձեր մասին: Իսկ այժմ ձեզ սաղություն:

Անդրանիկը Զուլֆայի կամուրջը գրավելով, հետևյալ հեռագիրը ուղարկեց Պարսկաստանի շահին. «Ես եկել եմ, որ անցնեմ. ճանապարհ էլ տաս՝ կանցնեմ, չտաս էլ կանցնեմ»: Առավոտյան շահից պատասխան եկավ. «Ճանապարհը բաց է քո առաջ. կուզես Խոյով գնա, կուզես՝ Թավրիզով»:

Անդրանիկը բռնեց Խոյի ճանապարհը:

Մեկնելուց առաջ Ջուլֆայի մաքսատան պահեստներից զինվորներին չամիչ ու նուշ բաժանվեց:

Ալի Իսհան փաշան տասներկու հազար զորքով կանգնած Էր Սալմաստում: Իմանալով մեր առաջխաղացման մասին, նա հինգ հարյուր զինվոր Սալմաստի ճակատում թողնելով իբրև թիկունքի պաշտպան, մնացյալ ամբողջ զորքով շարժվեց դեպի Խոյ մեր զորամասին դիմագրավելու: Արագ տեղ հասնելով, նա Խոյի դարպասները փակել Էր մեր առաջ և ամրացել Սեյդավար գյուղում:

Չամիչ ուտելուց և Արաքսի պղտոր ջուրը խմելուց մեր հիվանդ զորքը դանդաղ Էր շարժվում, և մեր նպատակը՝ Խոյը գրավելով շարժվել դեպի Ուրմիա, դաշնակիցների բանակին միանալու՝ գրեթե ձախողված էր:

Երկու օր հետո իրիկնապահին Սեյդավար գյուղի առաջ հանդիպեցինք Ալի Իսհան փաշայի առաջապահներին և կռվի բռնվեցինք նրանց հետ: Մենք ընդամենը վեց հարյուր ձիավոր Էինք, իսկ մեր հիմնական զորքն ու հրետանին դեռ տեղ չէր հասել:

Թշնամու դիրքերը իշխում էին մեզ վրա և մենք ստիպված մեր գլուխները քաշել էինք հողաթմբերի ետև:

Հուսահատ էինք ամենքս:

Հանկարծ երևաց Անդրանիկը ձին հեծած, շողշողուն սուրը ձեռքին, ետևից դրոշակակիրները զորամասի դրոշը բարձոր պահած:

Հե՛յ, հե՛յ, ի՞նչ եք նստել դիրքերում, մենք գնում ենք հաղթելու և միայն հաղթելու: Наперед! բուլղարերեն բացականչեց զորավարը և թշնամու գնդակների տարափի տակով սրարշավ նետվեց դեպի թշնամին: Մենք ակնթարթում թռանք մեր ձիերին և ուռա գոչելով նրա ետևից թափվեցինք հակառակորդի դիրքերի վրա:

Թշնամին ահաբեկված փախուստի դիմեց: Ասկյարները սարսափահար գցում էին հրացանները և ձեռքերը վեր բարձրացնելով, աղիողորմ գթություն հայցում:

Խնայեցե՛ք, մեղք եմ:

Սեյդավարի կռվում ծանրորեն վիրավորվեց հիսնապետ Թորգոմը: Նրա կողքին մի երիտասարդ ասկյար, որ նույնպես ծանր վիրավորված Էր, տենդի մեջ շարունակ կանչում էր. «Սրմալի՛, Արմալի»: Երևի սիրած կնոջն էր հիշում: Լուսադեմին նա մահացավ:

Վերցնելով Սեյդավարը և ջախջախելով Ալի փաշայի զորքերին, Անդրանիկը իր զորամասը շարժեց քաղաքի վրա:

Խոյը պարսպապատ էր:

Զորավարը հրամայեց պաշարել քաղաքը: Աջ թևի վրա ես էի կանգնած իմ հեծյալ գումարտակով, իսկ դեպի Սալմասա–Խոյ առաջացող գծի վրա՝ հարյուրապետ Շահկա Արոն:

Անդրանիկը երկու անգամ գրոհեց քաղաքի պարիսպները: Երրորդ գրոհին մեր թնդանոթները որոտացին և զորավարը քաղաքի հարավային պարիսպները քանդելով առաջինը մըտավ Խոյ: Նրա ետևից մտավ մի ձիավոր հարյուրակ և ապա ամբողջ զորքը:

Երեք օր կռիվ եղավ այդ քաղաքի համար: Խոյի տակ մի խիստ ամրացված կամուրջ կար: Շապինանդը ասաց, «Մախլուտո, ինձ մի քանի զինվոր տուր այդ կամուրջը գրավեմ»:

Քսան զինվոր վերցրեց ու գնաց: Մինչև կամուրջի կեսը գնաց՝ քսան զինվորն էլ սպանվեցին: Ինքը մենակ մնաց կամուրջի վրա:

Էլի զինվոր տուր, ասաց:

Տարար տղաներին սպանեցիր, նորի՞ց զինվոր կուզես, նեղացած գոչեցի ես: Այս անգամ տվեցի տասնհինգ զինվոր: Նրանք էլ սպանվեցին, ինքը մենակ մնաց

կամուրջի վրա: Երրորդ անգամ ուզեց՝ տվեցի հինգ զինվոր:

Անդրանի՛կն եմ, Անդրանի՛կն եմ, հիսուն հոգով հիսուն հազարի դեմ եմ կռվել Սասունում, բռռաց զորավարը և այդ հինգ զինվորով կամուրջի մյուս կեսն էլ գրավեց:

Պարսիկ բնակիչները դադարեցրին կռիվը, իսկ թուրքերը շարունակեցին դիմադրել:

Անդրանիկը քաղաքի կեսը գրավել էր և թուրքերն էլ մտադիր էին անձնատուր լինել, երբ մի ահավոր իրարանցում և գոռում-գոչում լսվեց քաղաքի պարիսպներից դուրս:

Ալի Իսհան փաշայի հեծյալ զորաբանակը Սալմաստի կողմից օգնության փութալով Խոյում դիմադրող թուրքերին, մերկացած սրերով Հարձակվել էր հայ անզեն գաղթականության վրա:

Մեր զինվորները Խոյի ճակատը լքելով, գլուխները կորցրած շտապեցին իրենց ընտանիքները փրկել:

Անդրանիկը ստիպված նահանջի հրաման տվեց և գաղթականներին փրկելու համար ճակատամարտը փոխադրեց քաղաքի պարիսպներից դուրս: